

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2018-5-1-Ա

ք. Երևան

22.10.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի հոկտեմբերի 22-ի նիստում քննարկեց 2018 թվականի սեպտեմբերի 12-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ (Երևան, Նալբանդյան 46) ընկերության բողոքը (№20171735) «ЕРЕВАНСКИЙ ТРАДИЦИОННЫЙ» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված բառային ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «ԵՐԵՎԱՆ ԵՐԵՅԱՆ» («Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 2, ԱՄ, N 3192, 11.06.1998) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 122-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված համակցված ապրանքային նշանի մաս կազմող «ЕРЕՅԱՆ» բառը ամբողջովին ներառված է հայտարկված բառային ապրանքային նշանի մեջ, կազմելով նրա սկզբնամասը: Ինչ վերաբերում է «ТРАДИЦИОННЫЙ» բառին, ապա Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-

րդ կետերի համաձայն այն չունի տարբերակիչ հատկություն, քանի որ ակոհոլային խմիչքների համար համընդհանուր է դարձել խոսակցական և առետրային պրակտիկայում որպես նկարագրական բնույթի նիշ:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 9-րդ հոդվածի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ ներկայացված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «ԵՐԵՎԱՆ ԵՐԵՅԱՆ» (N3192) համակցված ապրանքային նշանին, ինչպես նաև ներկայացված ապրանքային նշանում առկա իրար տակ գրված բառերը չունեն տարբերակիչ հատկություն և չեն կարող ստանալ իրավական պահպանություն:

Փորձաքննության բաժնի փորձագետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «ԵՐԵՅԱՆՍԿԻՅԻ ԿՐԱՍՆԱԿԱՆ ՓՈՐՃԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՂԵՄ ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԿՐԿՆԱԿԱՆ ՓՈՐՃԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԹՅՈՂՆԵՒ ՈՒՄԻ ՄԵՋ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ